ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (*Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0*) նախնական քննարկման համար ներկայացված գրավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ կառավարություն	«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (*Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ կերպ. <<Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ մասերը, ինչպես նաև 26-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (*Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ. <<Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է 2020 թվականի հուլիսի 1-ին և դրանից հետո:>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (*Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ. <<Հոդված 3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագիր կնքած բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին մուտքագրված գումարները (մնացորդները) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի դիմումի հիման վրա կարող են տնօրինվել նաև միանվագ կարգով:>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (*Պ-486-25.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի վերնագիրը փոխել և շարադրել հետևյալ կերպ. «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Ընդունվել է:	Ընդունվել է: